


Յուսիկ սրբազան, վերևի տողերը գրած ժամանակ դուք ոչ ճշմարտութեան բարեկամ էք եղել և ոչ քննադատութեան կողմնակից։ Բայց այն ժամանակ դուք պաշտպանում էիք Մովսէս Խորենացուն յարձակումների դէմ (տ. Լումայ, նոյն էջ), այժմ ինքներդ յարձակում էք Ղազար Փարպեցու վրայ։ Եթէ յիրաւի դուք այժմ քննադատութեան բարեկամ էք դարձել, եթէ այդպիսի մեծ փոփոխութիւն է առաջ եկել Ձեր մտքի մէջ, այն ժամանակ միայն ուրախանալ կարելի է։

Ես խնդիրը փակուած եմ համարում*։

Երուանդ վարդապետ.



ԲԱՅԳԷՆ Վ-Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՅՈՒՋՄԱՆ ԱՌԹԻՒ

Նորին Վեհափառութեան

Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց

Տ. Տ. ՄԿՐՏՁԻ Ա.

Սինոդի անդամ Բարդէն

Վարդապետ Աղաւելեանից

Ամենախոնարհ յայտարարութիւն.

Յունվարի 25-ին Ձերդ Վեհափառութեան հրամանով Սինոդի միւս անդամների հետ հաւաքուելով Դիւանատուն՝ լսեցինք ձեմարանի Տեսուչ Բարձրապատիւ Տ. Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանից ձեմարանի աշակերտական ներկայ յուղումների մասին տեղեկութիւններ, թէ ինչպէս այդ յուղումներն սկիզբն են առել սոյն ուսումնա-

* Երկու կողմն էլ իրենց ասելիքը յայտնած լինելով, փակում ենք այս հարցը։

կան տարուայ սկզբից, ինչպէս են զարգացել և հասել այժմեան վտանգաւոր դրութեան, թէ ինքս և թէ միւս Գեր. անդամները նկատելով որ Մեարոպ վարդապետը պարտաւոր է նախ գրաւոր զեկուցումն տալ Զերդ. Վեհափառութեան և ապա մենք կարողանանք և մեր կարծիքը յայտնել համաձայն Զերդ. Վեհափառութեան հրամանի, ուստի յետաձգուեց երկրորդ օրուան 26-ին՝ մտածելու թէ ինչ կարելի է անել այդ յուզումների առաջն առնելու համար երկրորդ օրը Զեր պատուէրը չստացանք այդ առթիւ գումարուել Վեհարան, երրորդ օրը 27-ի առաւօտեան ինձ յայտնեցին Վեհարանում միւս անդամների ներկայութեամբ՝ որ այլ ևս հարցը փակուած է, քանի որ հայր Տեսուչը գրաւոր յայտնել է, որ երեք արձակուած ուսանողների հետ յօժարակամ հեռանում են միւս տասնեկինը (19) հոգի ուսանողները, որոնք պաշտպանում էին արձակուածներին:

Վեհափառ Տէր, իմ կողմից ձեմարանի վտանգաւոր յուզումների հարցը փակուած չհամարելով, ընդհակառակն աւելի ինձ հետաքրքրում է այն խնդիրը՝ թէ ինչու յիշեալ 19 հոգի ուսանողներն իրենց 3 ընկեր հոգու համար թողնում ու հեռանում են ձեմարանից, ահա այս հետաքրքրութիւնից և իմ բարոյական պարտականութիւնից դրդուած՝ ամենախոնարհաբար յայտնում եմ ձեմարանի մասին հետեւեալ դիտողութիւններս:

Առաջին անգամ չէ, որ ձեմարանում տիրում է աշակերտական յուզումն, առաջին անգամ չէ, որ ալեկոծւում է աշակերտական խաղաղ կեանքը և երեան են դալիս խռովութիւններ այդ լուսոյ տաճարի յարկի տակ: Պարբերաբար և յաճախակի կրկնուել են այդ խռովութիւններն և յուզումները ձեմարանի կեանքի մէջ սկսած 1878 թ. մինչև այժմ՝ զանազան վարչութիւնների ժամանակ, երբեմն փոքր չափով և երբեմն էլ մեծ չափով զոհեր տալով: Դժբախտաբար ամեն անգամ էլ այդ խռովութիւնների ժամանակ տուժողն և զոհ տուողն եղել է մատաղ սերունդը-աշակերտութիւնը, կամ արտաքսուելով

և կամ մնալով ու կորցնելով իրենց մատաղ կեանքի թանկագին ժամերը: Թէ ձեմարանում իմ ուսանողութեան օրից սկսած (1892—95 թ.) անձամբ և թէ յետոյ՝ մինչև այժմ հեռուից դիմելով եկել եմ այն եղբակացութեան՝ որ այդ հաստատութեան մէջ անխուսափելի կերպով կը կրկնուեն խռովութիւններ ու վտանգաւոր յուզումներ, քանի որ միջոցներ ձեռք չեն առնուիլ արմատական կերպով բուժելու այն վէրքերը, որոնք գոյութիւն ունեն ձեմարանում: Ամեն անգամ երբ խռովութիւն է պատահել ձեմարանում, երբէք խորը չեն թափանցել՝ թէ որոնք են այդ խռովութիւնների պատճառները, և ինչպիսի արմատական միջոցների պէտք է գիտնել՝ որ վէրքը բուժուի և ոչ թէ աւելի խոր վէրք բաց անել եղած վէրքի կողքին՝ արձակելով տասնեակ աշակերտներ:

Այդ յուզումների պատճառները համարեա միշտ էլ եղել են աշակերտական այս կամ այն պահանջները, որոնք վարչութեան կողմից մեծ մասամբ մնացել են առանց ուշադրութեան: Իսկ աշակերտական պահանջները գլխաւորապէս պատել են հետեւեալ խնդիրների շուրջը. ա) ձեմարանի արտօնութեան խնդիրը, թէ ինչպիսի չնչին արտօնութիւններ են վայելում ձեմարանաւարտ սաները, բ) ձեմարանի անհաստատուն և չափազանց թերի և միայն անունով գոյութիւն ունեցող ծրագիրը, այսինքն թէ ինչպիսի աւելորդ և անօգտակար առարկաներ գոյութիւն ունեն լսարաններում՝ և դասարաններում՝ և ընդհակառակն ինչպիսի կարևոր առարկաներ գոյութիւն չունեն, գ) Ոչ մասնագէտ և իրենց առարկան չիմացող ուսուցիչների խնդիրը, որոնք տեսչի կողմից հրաւիրուել են միայն ուսումնական տարին մի կերպ անցկացնելու և ոչ թէ աշակերտներին մի բան սովորեցնելու համար, դ) Անհմուտ տեսուչների խնդիրը, որոնք ընդունակութիւն չեն ունեցել ձեմարան կառավարելու, այլ ոմանք հացի խնդրի համար և ոմանք էլ անարիտութեան համար յանձն են առել կամ աւելի լաւ է ասել յաջողցրել են այդ պատասխանատու պաշտօնը ձեռք բերելու, ե) Մի շարք խըն-

դիրներ իրենց տնտեսական և ներքին կեանքի վերաբերեալ. զ) անընդունակ և իրենց պաշտօնին անարժան վերակացուների խնդիրը և այլն և այլն:

Ամեն անգամ երբ այդ պահանջներն երևան են եկել աշակերտութեան կողմից՝ ձեմարանի վարչութիւնը և որ գլխաւորն է էջմիածինը չէ աշխատել բազմակողմանի կերպով խնդիրը շօշափել և արմատական միջոցների դիմել բաւարարելու սաների պահանջները. այլ որպէս զի վարչութիւնը ցոյց տայ՝ թէ յիրաւի ինքը լաւ կառավարում է իրեն յանձնուած պատասխանատու գործը՝ աշխատել է մեռցնել այդ պահանջներն և ծածկել ձեմարանի պատերի մէջ, իսկ երբեմն՝ երբ հնար չէ եղել ծածկելու՝ աշակերտների բողոքը բռնկուել է ձեմարանի պատերից դուրս և վարչութեան կողմից այդ յուզումները վերջացնելու համար միակ միջոցն այն է եղել՝ որ արձակել են «լմբոստ» աշակերտներին՝ կարծելով թէ դրանով խաղաղացրին ձեմարանի յուզուած կեանքը, մինչդեռ միայն ժամանակաւոր հանգցրել են կրակը, որը պարբերաբար առկայծուել է և կրկին բռնկուել, կերկարէր իմ խօսքս, եթէ այստեղ մի առ մի առաջ բերէի, թէ որքան և ինչպիսի ընդունակ աշակերտներ են զսֆ գնացել այդ խռովութիւններին և ինչ պատճառներից դրդուած՝ այդ բոլորի պատմութիւնն արձանագրուած են թէ Դիւանատան և թէ ձեմարանի գործերում: Խիստ նշանակալից է այն հանգամանքը, որ երբեմն ձեմարանի դրամական հաշիւների վերաբերմամբ փորձ է եղել քննութիւն նշանակել ստուգելու հաշիւները, բայց ոչ մի անգամ քննութիւն չէ նշանակուել իմանալու այս կամ այն տարուայ ձեմարանի ուսումնական և բարոյական յառաջագիմութեան մասին, իմանալու թէ արդեօք ինչպիսի՞ ընդունակ և համապատասխան ուսուցիչներից է կազմուած ուսուցչական խումբը, իմանալ թէ նշանակուած Տեսուչն որքան բարեխիղճ կերպով է առաջ տանում իրեն յանձնուած ծանր և պատասխանատու գործը, և թէ որքան արժանաւորութիւն ունի այդ պատասխանատու պաշտօնի մէջ թողնելու նրան, թէ

արդեօք որպիսի պատրաստութիւն ունեցող վերակացուներ գոյութիւն ունեն ձեմարանում, որոնց վրայ ծանրացած է սաների բարոյական դաստիարակութիւնը, որովհետեւ, ձեմարանն իբրեւ գիշերօթիկ դպրոց, առաւելապէս նրանք են միշտ շփուում աշակերտների հետ, կամ թէ որպիսի դրական ուղղութեամբ աշակերտներ է պատրաստում ձեմարանը հայ կեանքի համար և եթէ գոյութիւն ունեն այդ աշակերտների մէջ բացասական կողմեր, մտածոււմ է արդեօք այդ բացասական կողմերի առաջնաւորներ և դրա դէմ վարչութիւնն ինչ միջոցներ է ձեռք առել։ Ովքեր հետաքրքրուել են ձեմարանի ուսումնական մասով, անշուշտ նկատած կը լինեն, որ իւրաքանչիւր նոր նշանակուած տեսուչ համաձայն իւր հասկացողութեան և ցանկութեան վերացրել է ձեմարանից այս կամ այն առարկաներն և փոխարէն կամ ոչինչ չէ աւելացրել և կամ մտցրել է ուրիշ առարկաներ։ Նոր եկած ուսուցիչն իւր առարկան աւանդել է մի դասագրքով, իսկ մի ուրիշը նոյն առարկան մի այլ դասագրքով—առանց նախօրօք հաւանութիւն գտնելու մանկավարժական ժողովի կողմից։ Տարիների ընթացքում ուսուցիչն իւր հեշտութեան համար փոխանակ դասագիրք տալու աշակերտի ձեռքը, բաւականացել է իւր առարկան թելատրութեամբ աւանդել աշակերտներին՝ պատճառ լինելով թանկագին ժամերի կորստեան, տարին մի երկու տետրակ անմշակ նիւթ տալով։

Այստեղ էլ չեմ ասում՝ թէ ինչպիսի թերութիւններ եղել են մատենագարանի, որի անունով իւրաքանչիւր տարի նախահաշուով աչքի ընկնող գումար են ստացել, և կամ այլ ճիւղերի վերաբերեալ, որ վարչութիւնները միայն աւանդաբար յանձնել են մէկը միւսին։ Վերջին տարիներում մի քանի անգամ է պատահել, որ ուսումնական տարին սկսուել է շատ ուշ և վերջացել Մարտին կամ Ապրիլի սկզբներին, որպէս զի աշակերտները ցրուեն և ուսումնական տարին վերջացրած համարեն։ Իւրաքանչիւր տարի աւարտողները մի կերպ ուսանողական տարի-

ներն անցկացնելով աւարտել են և գնացել, բայց թէ որպիսի պաշար են տարել նրանք, զորպիսի պատրաստութեամբ են դուրս եկել կեանքի մէջ դորձելու իբրեւ հայոց ըսարճրագոյն գպրոցից աւարտած սաներ, այդ մասին ոչ ոք չի հետաքրքրուել՝ միայն իւրաքանչիւր ուսումնական տարուայ սկզբին Գէորգեան տօնին Տեսուչը կարգացել է մի քանի հանգիսականների առաջ համառօտ տեղեկութիւններ, բայց ոչ ձեւարանի ուսումնական կեանքի մասին, այլ աւարտողների ու պաշտօնեաների չոր ու ցամաք թուերը դնելով հասարակութեան առաջ։ Իւրաքանչիւր գպրոց ունի իւր հոգաբարձութիւնը, որի վրայ իրեն ընտրող հասարակութեան կողմից բարոյական պարտականութիւն կայ դրուած բացի գպրոցի նիւթականի մասին հոգալուց՝ նաև չմոռանալ գպրոցի յառաջադիմութիւնը և այդ մասին կարեւոր ուշադրութիւն դարձնել Տեսչի միջոցով։ Այս նկատմամբ կարծես թէ ձեւարանը մի կատարեալ բացառութիւն է կազմում մեր բոլոր գպրոցների մէջ, և ոչ միայն չունի հսկող հոգաբարձական մարմին, այլ սաների ծնողների հսկողութիւնից անդամ բոլորովին ազատ է, և ամեն բան թողնուած է միայն և միայն Տեսչի կամայականութեան և բարեհաճութեան։ Ըշմարիտ է ձեւարանը գտնուում է Ձերդ Վեհափառութեան անմիջական հսկողութեան ներքոյ, բայց չկայ մի հսկող մարմին, որպէս զի միշտ հսկի և կարեւոր դէպքերում Ձերդ Վեհափառութեան թոյլտուութեամբ կարեւոր անօրէնութիւն անի-իբրեւ հոգաբարձական մարմին։ Ամեն բան թողնուած է Տեսչի կամքին-նշանակուած Տեսուչն ըստ իւր հայեցողութեան կառավարում է ձեւարանը, ինչպէս վերևում ասացի, տակն ու վրայ անելով նախօրդից մնացած կարգ ու կանոնը կամ ուսուցչական խումբը-առաջնորդութեամբ անձնական հաշիւներով, և կամ առարկաները փոփոխելով։ Միւս կողմից Տեսուչը չէ կարողանում ուսումնական մասին բարեխղճօրէն հետեւել, որովհետև այս վերջին տարիներում նրա վրայ է ծանրացած նաև տնտեսականը, իսկ հոգաբարձական մարմին հաստատելով՝ կարելի կը լինի

Տեսչին ազատել տնտեսական մասի ծանր պարտականութիւնից՝ եթէ ձեւարանի կեանքը սուս ու փուս է անցնում՝ ամեն մարդ գոհ է և՛ Տեսուչը և՛ ուրիշները. իսկ թէ ինչ է աւանդւում, ինչ յառաջագիծութիւն է լինում՝ այդ խաղաղ կեանքի մէջ՝ ոչ ոքին այդ չէ հետաքրքրում, բայց երբ ժամանակաւոր հանգած կրակը բռնկւում է և անհնարին է լինում վարչութեան կողմից այդ կրակը հանգցնել ձեւարանի պատերի մէջ, միայն այդ ժամանակն է Տեսուչի ճանաչում՝ Վեհարան և վերջինիս օգնութիւնը խնդրում:

Ասացի որ իւրաքանչիւր տարի ձեւարանի Տեսչի շնորհիւ փոփոխուել են ձեւարանի ներքին կեանքի կանոնները. այս 1906/07 ուսումնական տարուայ մէջ այդ փոփոխութիւններն աւելի աչքի էին ընկնում, չկան կրօնի դասեր, չկան այլ կարեւոր առարկաներ, սաների կեանքը միանգամայն ազատ է համարւում, իսկ այդ ազատութիւնը կայանում է նրանում, որ երբ էլ լինի աշակերտը կարող է գտնուել ձեւարանից դուրս, որտեղ կամենան կարող են գնալ, թէկուզ բացակայեն դասերից կամ չլինեն սերտողութեան ժամանակ, կամ ամբողջ ժամանակ աղմուկ հանեն դասարաններում և սերտողութեան ժամանակ, կամ ուսուցիչը դասի գնայ, իսկ աշակերտը 5—10 րոպէ յետոյ մտնի դասարան, ինչ տեսակ ձևի կամենան՝ կարող են հագնուել, երբ կամենան՝ կարող են դասի գնալ և այլն և այլն. խօսքս երբեք նրա մասին չէ, թէ ես հակառակ եմ՝ որ այդպէս է, այս մասին իմ անձնական կարծիքը թողնում եմ յարմար ժամանակին, այլ թէ ո՞վ արտօնեց հայր Տեսչին այդպիսի փոփոխութիւններ մտցնել ձեւարանի կեանքի մէջ, որ մանկավարժական ժողովում քննութեան ենթարկելով այդ նորամոյժ կարգերը, գտան որ աշակերտներին կամ ուսանողներին տրուած այդ ազատութիւնը խիստ նպատակայարմար բան է, և առանձին մնաս չի բերիլ սաների կրթական և բարոյական կեանքին: Հակառակ նախկին կարգերի սոյն ուսումնական տարուայ սկզբից աշակերտները չեն գնում եկեղեցի, թէ երգեցիկ խումբը

և թէ միւս աշակերտները, բացի մի քանի աշակերտներից, արդեօք որի կարգադրութեամբ հայր Տեսուչը դադարեցրել է աշակերտներին եկեղեցի ուղարկել, և դրա հետեանքն այն է՝ որ Մայր Տաճարում երգում են մի քանի գիւղական անպէտք տիրացուներ, և քառաձայն գրաւիչ երգեցողութիւնն ընդմիշտ չքացել է Մայր Տաճարից:

Այդ բոլորից յետոյ Զերդ Վեհափառութեան բարեհաճ ուշադրութիւնն եմ դարձնում այն վտանգաւոր յուզումների վրայ, որն այժմ գոյութիւն ունի ձեմարանում, և որով վրդովուած է ձեմարանական կեանքը, և եթէ արմատական միջոցներ ձեռք չառնուի, կարող է տխուր վախճան ունենալ: Այժմ ևս արձակուում են աշակերտներ՝ ոչ ոք չէ կարող երաշխաւորել որ այս վերջինը կը լինի և չի կրկնուիլ այս տխուր երեւոյթը, որ Մայր Աթոռի—Հայ ժողովրդի հաշուով երիտասարդ ոյժեր հասնում են լսարաններն և սպասւում է, որ նրանք մի կամ երկու տարուց յետոյ կաւարտեն և հայ ժողովրդի գործիչների ազքատիկ անդաստանում կաւելանան մի քանի ձեռնհաս ոյժեր, բայց դժբախտաբար արձակուում են և կամ ստիպուած են լինում թողնել ձեմարանն ու հեռանալ, կիսատ թողնելով իրենց ուսումն և զոհ դառնում ուրիշների կամայականութեան: Այդ է պատճառը, որ երբեմն Զրդ դասարանից փոխադրուելով Ա. լսարան 40-45 հոգի, հետզհետէ հեռանալով Գ. լսարանում միայն մնում է 5-7 հոգի, իսկ իմ ժամանակը 1894/95 թուին Գ. լսարանում կար երկու հոգի, ուրեմն այդ թուին ձեմարանը տուեց 2 ձեմարանաւարտ, որովհետեւ իմ ընկերներից 1893/94 թուին 18 հոգի Բ. լսարանից թողեցին և հեռացան այլ և այլ իրաւացի (? խմբ.) պատճառներից դրդուած: Թէ անձամբ ինքս գիտակցել եմ և թէ շատ ուսանողներից լսել եմ իրաւացի տրտունջներ, որ ձեմարանի լսարաններն իրենց անուան բարձրութեան վրայ չեն դրուած: Ամենքն էլ գիտակցում են, որ այդ երեք լսարաններում ուղղակի ժամավաճառութիւն է լինում և աշակերտները կորցնում են իրենց թանկագին ժամերը, որովհետեւ իբրեւ

Քարձրագոյն Կուրսեր—լսարաններում չնչին բան են տալիս ուսանողներին, որի պատճառով միջոց ունեցողը հիասթափուած թողնում ու հեռանում է ձեմարանից իւր ուսումն այլ բարձրագոյն դպրոցներում շարունակելով, իսկ միջոցից զուրկ խեղճ ուսանողներն երկու չարիքներից փոքրագոյնն են ընտրում և մի կերպ անցկացնում մատաղ կեանքի համար այդ երեք թանկագին տարեշրջանները։ Այս բոլորը ի նկատի առնելով տեսնում ենք՝ որ ձեմարանի համար իւրաքանչիւր տարի 50—60 հազար ռուբլի ծախսած գումարի դիմաց հայ ժողովուրդը ստանում է շատ չնչին քարոյական տոկոս։

Վերոգրեալների մասին հաղորդելով Ձերդ Սրբութեան, ամենախոնարհաբար խնդրում եմ շուտափոյթ կարգադրութիւն՝ քննութիւն նշանակել, թէ ինչ պատճառներից դրդուած արձակուում են 3 ուսանող և ինչու սրանց արձակելու պատճառով թողնում ու հեռանում են ձեմարանից 19 հոգի ուսանողներ։ Ապա ի նկատի առնելով, որ ձեմարանը ներկայանում է այժմ մի բոլորովին հիւանդոտ մարմին իւր այլ և այլ պակասութիւններով, որոնց միայն ստուերը ներկայացրի Ձերդ Սրբութեան սոյն իմ յայտարարութեան մէջ, խնդրում եմ միջոցներ ձեռք առնել կատարելապէս բուժելու այդ հիւանդոտ հաստատութիւնը։ Իսկ այդ հիւանդութիւնը բուժող կարող բժիշկներն պիտի լինեն հայ ուսումնական ասպարիզի վրայ դորձող հմուտ ձեռնհաս անձնաւորութիւնները, որոնց պէտք է հրաւիրել և նրանց ձեռքով կանոնաւորել վերևում շօշափած խնդիրները։ Շատ նպատակայարմար կը լինէր որ հրաւիրուէր Բ. Կենտրոնական ժողով, որտեղ պէտք է քննուի ոչ միայն ձեմարանի, այլ և առհասարակ մեր բոլոր թեմական և Ծխական դպրոցների կանոնաւորութեան հարցը, բայց եթէ առ այժմ այդ դժուարին է, գոնէ կարելի է Ապրիլ ամսին Ս. Էջմիածին հրաւիրել հմուտ անձանց և նրանց ձեռքով բժշկել ձեմարանի հիւանդութիւնները, որքան շուտ՝ այնքան լաւ, որպէս զի այդ հիւանդութիւնները պատճառ չլինեն այդ

Հաստատութեան մահուան ձեմարանը միակ բարձր կրթական Հաստատութիւնն է Ռուսահայոց, Տաճկահայոց և Պարսկահայոց համար, որտեղ պատրաստուում են նրանց համար օգտակար գործիչներ և ուսուցիչներ, ուրեմն Ս. Էջմիածնի և հայ ժողովրդի վրայ բարոյական մեծ պատականութիւն կայ խնամելու և իւր բարձրութեան վրայ պահելու այդ հաստատութիւնը: Կրկին և կրկին խնդրելով Ձերդ Վեհափառութեան բարեհաճ ուշադրութիւնը Ձեր խնամքին թողնուած ձեմարանի ներկայ դրութեան վրայ՝*

Մնում եմ ամենախոնարհ որդի և ծառայ

Բաբգէն վարդապետ Աղաւելեանց

29 Յունվարի 1907

Ս. Էջմիածին:

Գ Ր Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

Գլ. 2.

Միտեր Գրէյ եռանդուն կերպով ձեռք զարկեց «Փարոսի» կաղժակերպութեան Ուղիղ Անկիւնում: Մէկ խուլ փողոցի ծայրում նա գտաւ մի ընդարձակ փայտածածք պարապ շինութիւն: Այդ շինութիւնը առաջ մի

* Մենք ըստ ամենայնի համակարծիք չենք հ. Բաբգէն վարդապետին. նորա դիտողութիւններէից շատերը միակողմանի են մեր կարծիքով և ոչ լաւ ուսումնասիրուած, բայց սիրով տպում ենք այս յայտարարութիւնը իբրև Մ. Աթոռի միաբաններից մէկի կարծիքը: